ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» Դեկտեմբեր 2026 թվականի N 1456 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ N 228/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 9.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (6.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ 30.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՕՀԱՆՆԱ ՆԱՊՈԼԵՈՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ս. Շահումյան փողոց N 228/1 հասցեի 30.2 (երեսուն ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24032026-08-0045 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի ապրիլի 13-ի N 73-Ա որոշումը, քաղաքացի՝ Օհաննա Նապոլեոնի Պողոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հոկտեմբերի 14-ին N 15903 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ս. Շահումյան փողոց N 228/1 հասցեի 9.36 (ինն ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (6.85(վեց ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 46977 (քառասունվեց հազար ինը հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Օհաննա Նապոլեոնի Պողոսյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Շահումյան փողոց N 228/1 հասցեի 30.2 (երեսուն ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր՝ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 87217 (ութսունյոթ հազար երկու հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Օհաննա Նապոլեոնի Պողոսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Օհաննա Նապոլեոնի Պողոսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Օհաննա Նապոլեոնի Պողոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Օհաննա Նապոլեոնի Պողոսյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԚԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի